

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՄԵՏԱՍԿՆԵԿՅՑ ԿՈՒԿԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
ՄԵՏԱԿՈՒՅՆ ՊՈՍԹՈՒՄ

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH OF GREATER BOSTON

145 BRATTLE STREET • CAMBRIDGE, MASSACHUSETTS 02138 • TEL: 354-0632

REVEREND FATHER MAMPRE KOUZOUIAN
(Pastor)

Օգոստոս 21, 1980

Սիրելի ծխականներ,

Տնտեսութեան - Սթիւըրթշիփ - Փրոկրէմը եթէ Անդամական ժողովի կողմէ վաւերացուի, ընթացք պիտի առնէ Հոկտեմբեր 26-ին՝ Տնտեսութեան Կիրակի օրը: Այդ առիթով մեր բոլոր ծխականները պիտի հրաւիրուին, որպէս զի իրենց եկամուտէն որոշ մաս մը խոստանան եկեղեցւոյ կարիքները 1981 տարեշրջանի ընթացքին հոգալու համար:

Անոնք որ կը փափաքին 1981-ի Յունուար 1-ին, այսինքն՝ հաշուական տարեշրջանէն՝ առաջ ընել իրենց ըրած խոստումին վճարումը, կրնան անմիջապէս սկսիլ: Այն ծխականները որ չեն կրնար Տնտեսութեան Կիրակի օրը խոստում ընել, Տնտեսութեան Փրոկրէմի Յանձնախումբի անդամներէն մէկը հաղորդակցութիւն պիտի պահէ այնպիսիներուն հետ: Բոլոր խոստումները եղած պէտք է ըլլան ոչ ուշ քան Դեկտեմբեր 1, 1980: Խոստացուած գումարները վճարուած պէտք է ըլլան 31 Դեկտեմբեր 1981-ին:

Այս տարի մեր եկեղեցւոյ օժման տարեդարձի հանդէսը կը զուգահիշի Տնտեսութեան - Սթիւըրթշիփ - Կիրակի օրը: Լիայոյս ենք որ ներկայ պիտի գտնուիք Սեպտեմբեր 28-ին, յաւարտ Ս. Պատարագին կայանալիք Մասնաւոր Անդամական ժողովին, որպէս զի պաշտօնապէս վաւերացնէք Տնտեսութեան - Սթիւըրթշիփ - Փրոկրէմը:

Ներփակեալ պիտի գտնէք Տնտեսութեան մասին քացատրագիր մը:

Աղօթարար եւ յարգանք
ՍԱՄԲԸՆ ԲՆՅ. ԳՈՒԶՈՒԵԱՆ
Հոգեւոր Հովիւ
Եւ
ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՅԱՆՉՆԱՌԻՄԲ